Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

14925

Վարդ և Մանիշակ

891.99
Շ-25

1875

2003

# ՎԱՐԴ

ԵՒ

# ՄԱՆԻՇԱԿ

## ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

(գիւղական կեանքից)

Աշխատասիրութիւն

ԳԵՈՐԳ ԾԱՂԿԷՃԵԱՆՑԻ

18[illegible]

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՑՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

891.99
Ծ-25
ԻՒՂԱԲԵՐ
ՓԱՓԱԶԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

891.99
Ծ-25

# ՎԱՐԴ
# ԵՒ
# ՄԱՆԻՇԱԿ

## ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

(գիւղական կեանքից)

Աշխատասիրութիւն

**ԳԷՈՐԳ ԾԱՂԿԵՐԴԵԱՆՑԻ**

ՏՓԽԻՍ
1875

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՑՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ և ԸՆԿ.

13 JUL 2013

47149

Այս իմ առաջին աշխատանքը,
Երիտասարդութեանս պտուղը,
Քեզ եմ նուէրում,
Քո անունով դրոշմում,
Ո՛վ իմ անտէս հայր՝ ԳԷՈՐԳ.
Որ չ'անհետանայ քո անունը,
Քո անտէս որդու սրտից։

Дозволено цензурою Тифлисъ. 30-го Декабря 1874 г.

19 NOV 2011

## Ա.

Ապրիլ ամսի տասն էր, արեգակն բաւականին բարձրացել էր, յանկարծ երկինքը ունքերը վրատուեց, և ամպերը վիշապի պէս ձորերի միջից բարձրանում էին դէպի կապուտ երկինքը։ Մի րոպէում ծածկեցին, արեգակը էլ չէր երևում, մարդու սիրտ հենց տխրեց, որ չէր ուզում տանից դուրս գալ։ Միւս կողմից էլ սելաւ վըրակալաւ. Այգեհատու տների բաշերից մի մի արխ էր վազում, քուչէքը ծով դարձան, դաշտերը ցեխացան, մարդ մի քայլ փոխելիս հազար տեղ գլխի վերայ վայր էր ընկնում։ Ամէն մարդ տուն մտաւ, Թռչուններն էլ իրանց բունը քաշվեցան, մի խօսքով մի քիմանայ, մի հոգի չէր երևում դուրսը,

Այս սելաւում մի՛ էլ տեսնուս Այգեհա-

տու երիտասարդների քեթխուդայ վարդը (¹) մի երկու ընկերներ էլ հետը ղուքված, գդակները քէշ ծածկած, բայաթի կանչելով, ծիծաղելով եկան Մարտիրոսի տան սոխանկը մտան, սոխանկիցը ձեն տուին, դուրս եկաւ մի Նորահարս դնչկալը մինչև քթի ծայրը գձած:

—Մարտիրոսը տանն է, Հարսը գլխով արաւ տանն է:

—Ասա դուրս գայ:

—Օ՛հ բարով վարդ, հը՛ ինչ խաբար:

—Խէր խաբար է, քեզ մօտ մի քիչ բան ունիմ:

—Դէ համեցէք. ախչի Գուլլուզար շոր գձէ ղօնախնու համար (կանչեց Մարտիրոսը):

Բոլորեքեան 'ի միասին տուն մտան, շարվեցին օջախի առին: Վարդը ուզում էր շուտով խօսք վայր գձէ իր բանից, բայց ամաչում էր: Վարդի բախտից Մարտիրոսը խօսք վայր ձգեց:

—Վարդ ասումեն նշնվում ես՝ բղորթա՞:

«Ես էլ ընտուր համար եմ եկել» ասաց վարդը ցածր ձայնով իւր ընկերներին:

—Տօ՛ իմաստուն էիր, թէ իմաստուն աղռաւի ծերտ ես կերել, տօ՛ դու ի՞նչ գիտէիր, որ

(¹) Կրճատած Վարդանից:



ես էտ բանի համար եմ եկել:

—Էն սհաթին սիրտս իմացաւ, որ քու մըտքումը բան կայ:

—Չէ՛, սուտ ես ասում. քի մի օքմին ասել է, դրուստը ասա՛ էտ ո՞վ ասաւ:

—Օշով......

—Էլլը հէ...

—Մի օքմի՛ն ինձ ասաւ, որ Խապախանանց Մանիշակին ուզում ես:

—Դէ որ սիրտըտ իմացաւ, ես էլ հենց էտ բանի համար եմ եկել:

—Ասիր տեսայ որ բան կայ......

—Լաւ, տեհար թէ չըտեհար սուս կաց, չիմ հըլէ հրէս հեքիաթ անեմ քեզ: Սրանից երկու տարի ծէրքին մեր դաղէն ու Նրանցը Դըժար ուրթում քիրուր կոխքի էինք վէր եկած, ընդի ըստուր մէրը չուստ չուստ կանչում էր ինձ մօթալ կոխել տալի, ես շներին լափ տալ տալի: Էս գնալու գալում՝ ոնց որ էլաւ ես էլ չի գիդեմ, քիրուր սիրեցինք, ընդուց դենն ա մի օր որ իրար չենք տեսնում մեռնումենք: Երեգ չէ մեկել օրը էլ գնումէի Ջալալօղլի, ժանդարքը խէլի ընկած էր, հենց որ հասայ ախպրի կոխքը,

էն կէս գիշերին մինեւ տէնում մի ախչիկ կուժը լցրել էր կոխքին նստել, ու էս բայաթին բարակ ծլվլուն ձէնով ասում:

Արի՛, արի՛ վարդիկ,
մեր գեղի թաւլանիկ,
Ես քեզ սիրումեմ.
քեզ իմ փեսայ բռնել եմ,
արի ինձ թարքտ առ տա՛ր,
իմ ախպորտանցը մոխի մի՛ անիլ,
նրանք քեզ աղջիկ չեն տալ......

Դեռ էս բայաթին չէր պրծել, մօդիկացայ ի՞նչ տեսնում, խպախանանց Մանիշակ: Ախչի ըստի ի՞նչ ես շինում:

—Ոչինչ վարդ ջան, գիդէի, որ գալ պտիս ճամփայ էի պահում:

—Խի... ինչ բան կայ, բա էն օրը խիչի ասիր, ասի ես:

—Էն օրը միտս չէր, ասաւ:

—Դէ ասա՛, ասի:

—Գիդես ի՞նչ ա՝ Վարդ ջան, պարտական լինիս ահեղ դադատանին թէ, ինձանից ձեռը վերցնես. խում գիդեմ իմ ախպերտինքը կ՚պարծենան, թէ մենք մի հարուստ մարդիք ենք, մըլ-



քատէր.(1) ենք, մեզ ի՞նչ լայեղ է, որ նրապէս խլուպուսալիկ տղին աղջիկ տանք, թո՛ղ ինչ կուզէ ասեն. ես քեզ սիրումեմ, ինձ քիանից ոչով կարալ չի հեռացնել, չկել մահն էլ: Էս էլ կասեմ՝ Աստված ոչ արած, թէ քեզ մի քամբաղտութիւն պատահի, ես քիանից ծէրքին կմեռնեմ և իրար հետ մի տեղ էն կենքում կուրախանանք:

—Էս խօսքերը որ լսեցի, սիրել էի սիրել, եքսան սիրեցի, մի խօսքով հմի՝ որ սաղ ալամաշխարհը վրա գայ, էլ ինձ չեն կարալ նրանից հեռացնել:

—Տօ էտ գիտխլտի բաները դէնը կենայ, ընդմիջեց Վարդի ընկեր Աթանը, ինչ բանի հըմար էկել ենք էն խօսեցէք, ի՞նչ երկարացնելու վախտ է, ոչխարներուս անտէր անտիրական է:

—Հա՜, լաւ ես ասում:

Պատասխանեց վարդը:

Գիտես ի՞նչ է Մարտիրոս, ես եկել եմ, որ նշան մէր դնեմ, հմի քի եմ հարցնում, ի՞նչ ես ասում, Ստեփան (2) աղին ասեմ՝ թէ չէ:

---

(1) Ըստ կարծեաց իւրեանց:

(2) Մանիշակի մեծ եղբայրն է:

—Թէ ինձ ես հարցնում, ասել մի՛, ես գիդեմ, որ Նաքի աղչիկ չի տալ, լաւն էնա՝ թէ կարաս մի բանով աղչկայ հետ սուլղի բուլղի արա՛, դես դէն ձէն գձի, որ ձէն. ընկնի գեղս, որ դու սիրումես, ընդով էլ ոչով չի ուզել, հա՛ քի կտան. հա՛ գնա՛ ու..........

—Բաս՝ որ ըթէնց ա, անմարթի չըլինք, մըքիչ հաց բէրէ՛ք ուտենք, սոված սրտներուս գնում ա:

—Գուլլուղար, մքիչ հաց չինեցէք ուտենք:

Աչքս բարլին տեսնու, հենց սուփրա բացարին, որ տեսնողը կասէր՝ էրնակ ոչինչ չ՚ուտացնեն մէնակ մոխկ անել տան: Սուփրէն հարստացաւ, ղօնախնու գլխները տաքացաւ:

Էս էլ Աստուած կեանք տայ իմ Մանիշակին, Աստված մեր սրտի խորհուրդը կատարէ: Սուրբ Աստվածածինը լինի մեզ վրայ բարեխօս: Ալթա՛ն, Գէվօ՛, սաղ ըլէք, աստված մեր ախպէրութինը անպակաս անէ, ամեն տարի ըսենց ուրախութենով օրեր անցկացնենք: Մարտիրո՛ս՝ ալավէր-դի քու կշտին եմ:

—Եխշիօլ:



Բոլորն էլ խմեցին, կարգը ընկաւ Մարտիրոսին:

—Տղէրք, բարով հազար բարի էք էկել, աստված ձեզ պէս ղօնախներին իմ տանից անպակաս անէ, Վա՛րդ, ի՞նչ բանի համար էկել ես՝ աստված բարին կատարէ, Միասին ծերանաք, աչքներումթ թաց չըլի, ոնց որ էրկուստ էլ մի գեղըցի ու մի հողից էք, ընենց էլ մի բարձի ծերանաք, հայր Աբրահամու աղօթքը լինի ձեր վրայ:

Ամէն, միաբերան կանչեցին տղերքը:

## Բ.

Արեգակը մայր մտաւ, ճրագները վառեցին, մեր տղերքը սուփրից չըվերկացան. այլ ընդհառակն քանի կէնումէին այնքան սուփրէն հաղանումէր ու նոր նոր փլաւ ու չխրթմայ էին վերբերում: Մի ով բանիւ հենց դառան, որ չէին իմանում լիս է թէ մութը: Բոլորն հարբեցան, տեղներուն ձգվեցան, բայց Վարդի այնումը չէր, հենց ուտում խմումէր, որ կասես տասը տարուայ սոված լինէր, սա ես մի քանի

թաս էլ խմեց և իր ընկերների հացին տերա-
ցաւ։

Տանըցիք բոլորի համար տեղ գձեցին և շատ ըստիպեցին, որ վերկենան, բայց ո՛չ ոք այնումը չ՛գձեց, տանտրուցը որ բռնէր քաշտայրի՝ չէին իմանալ։ Խեղճերը տեսան, որ ոչոք չի վերկենում. վերևներուն մի մի ձունձ գձեցին ու վեր ընկած տեղներուն թողին։

Բոլորն էլ խռնփալէ քնեցին, Գուլլուղարըն էլ իր տեղը գձեց իր մարդուն շատ զոռ արաւ, որ վերկենայ տեղը մտնի, բայց նա հենց չէր քնաց, որ վերկենար, թէ նրան սսած, թէ քարին։ Խեղճ հարսը այնքան յո՜ յի՜ արաւ. որ ձէնը կտրվեց, վերջը տեսաւ, որ հաքես լող չ՛կայ, կրակը անթեղեց և գնաց քնելու, դեռ շորերը չէր հանել աքաղաղը կանչեց։ Սա էլ հանդիսա իր տեղը մտաւ ու խռռալէ քնեց։ Երկրորդ անգամ կանչեց աքաղաղը լող չեղաւ, երրորդ անգամ կանչեց թէ չէ Վարդը զարթնեց։

—Տղէրք վերկացէք որցակը կանչումա, շուտ հագնվեցէք գնանք, թաքուն էկել ենք, թաքուն էլ գնանք, ըստի ոքմին, որ տեսնու ինչ կասէ, թէ էս ի՞նչ են ոչխարներուն անդեր թողել ու-



էկել։ Հարսիս քունը հարամ էլաւ. վերկացաւ. քնթի տակին փնթփնթալէ, անթեղը ժաժ տուեց ծրաք վարեց։ Տղերքն էլ վերկացան պատրաստվեցան ճանապարհ ընկնելու։ Դեռ մութն-ու լիսը չէր ջոկվել՝ ճանապարհ ընկան։

—Մարտիրոս մնաս բարով, հարսի շնորհակալենք ղուլլուղիցդ, չը անիծես գիդեմ նեղացած կըլես՝ քունդ հարամ արինք, բան չկայ իմ Մանիշակն էլ մի օր քի ղուլլուղ կանէ։ Էլեսոյ դէդի շնորհակալ ենք։ Ասաց և դրպանից մի բաղդադի հանեց տվեց Էլեսոյին։

—Դէդի ջան էս բաղդադին թէ կարաս մի հնարքով Մանիշակին տուր, ու սսա ես էլ քի չուստ կտենում։

—Լաւ որդի ջան, դու միամիտ կաց։

—Դէ, դէդի ջան էլ ինչ թամբահ անեմ. դու գիտես էլի։ Դէ տղէրք շուտ արէք էկէ՛ք։

—Մնաք բարով Մարտիրոս, դէդի, հարսի, կանչեցին տղերքը և Վարդի հետևից ընկան։

—Աթա՛ն, Գէվօ գիշերս մի երազ եմ տեսել գիդեմ ոչ թէ ինչ ա։

—Բարին կատարի, սսա տեսնունք։

—Մթամ թէ ղուռուղօրնումը ըլէի ոչխար

տրածացնելիս, մինև տեհա մէջի ճանփուց մի աղջիկ դրա ինձ փախչում է, էկաւ, էկաւ ու կողքիս նստեց:

—Խէր է վախել մի էտ աղջիկը Մանիշակն է, էնա քի հետ կ՚նշնվի:

Աղօթարանը նոր բացվել էր. հասան իրանց ոչխարի մօտ. Յետոյ այնտեղից Վարդը իրանց տուն գնաց:

—Ատղա էս գիշէր որտեղ էս էլէր: (ասաց մայրը:

—Օղուր ոչխարի կշտին էի:

—Հա՛, լաւ ոչխարի կշտի ես էլէր, դու գնայ Խաչախանանց աղջկանը նշան տու, երբ գիդենամ դեռ քու ինչ վախտն է, դեռ հլա քեզ չես դրստել, մի երկու չարփայ ունիս, հենց գիդես աշխարհումս քեզ պէս հարուստ չ՚կայ, մոքիցդ էտ բանը հանէ Խաչախանանց Ստեփանը քի աղջիկ չի տայ՝ դու չօբան տղայ, նա մի աղայ լայեղ կանէ քեզ պէսին:

—Էրնակ մի լայեղ չանէ, էն վախտը ես գիդեմ:

—Ինչ պտի անէս, տօ շաշ, թէ ուրիշ ուրիշ գեղից ըլէք հա, ախր էլկուստէլ մի գե-



ղից, նրանք գիդեն ոչ, որ մի դարդակ խլուպուա-արիկ տղա ես:

—Գլուխը հենց օղլաա բէրեմ, որ իր օրումը տեհած չլի: Ասած ու քթի տակին փնթփնթալէ գնաց մի երկու հաց վերկալաւ տղարջղումը դըրուց, չոմբախը ուսին ու դէպխուրուն ճանապարհ ընկաւ: Արեգակը ճշատեղն էր հասել, որ Վարդը հասաւ ոչխարի մօտ, հասնելու պէս ուղացիր աթել չարվենին ական է Դարբնանց Աթօն վերևից կանչեց:

—Հէ... վա՛րդ, վա՛րդ... հէ՜ հէ՛ յի՛ Վա՛րդ:

—Հէ հէ՜ ի՞նչ ա:

—Դարիբ ոչխար չ՚կայ ըտի՜...... ըտի՜......

—Չէ՛, չէ՛, չէ՛:

Վարդը մի քանիսի ականը հանեց, բայց սիրտը չ՚տվեց մի օր կենայ առանց Մանիշակի: Այն օրը ոչխարը պէտք է տանէին սարը, ուստի Վարդը ասաց իւր ընկերներին՝ որ ոչխարը իրանք տանեն, ինքը գնայ մինչև տէնու Մանիշակին ու գայ: Նոքա ևս համաձայնեցան:

## Գ.

Արեգակը մայր մտաւ, ժանգարքը ընկաւ, երկինքը բաւականին պարզ էր, այս երեկոյ լուսինը թէպէտ մթնելուն պէս անցաւ Երկու Երեսայ այն կողմը, բայց աստղերի պայծառ լոյսը առանց նորան աւելի էին լուսաւորել մերձակայ սարերը և ձորերը։ Բագուկը բաւականին բարձրացել էր և ցոյց էր տալի, որ մօտ կէս գիշեր պէտք է լինի. այս ժամանակը եկաւ տուն Վարդը։ Մենք թողնենք այս տեղ Վարդին և տեսնունք այն բաղդաղին, որ Վարդը տվեց Նլեսոյին, ինչ եղաւ։ Նլեսոն կանչեց Մանիշակին իր տունը և տվեց բաղդաղին։ Դեր Նլեսոյի բերնից չէր դուրս եկել թէ ո՞վ է ուղարկել, այն րոպէին ձեռքիցը առաւ դոշին սեղմեց և լաց եղաւ։

—Ախչի խի ես լաց ըլում. էտ բաղդաղին իմ հարսինն է։

Հեկեկանքը խեղդում էր Մանիշակին պատասխան տալու, երկար ժամանակ լռութիւնից յետոյ հեկեկալով պատասխանեց։

—Քու հարսինն է՞...... ես լաւ գիտեմ էս ո՞վ է ղրկել, սորա ղրգողի ջանին մատաղ, որ



օրը կլի, որ նորա ձեռից ձեռնաբռնուկ արած ժամը գնալիս ըլեմ։

—Որդի անմեղ, խի ես աչքերդ քոռացնում, նա չիլենի հլբաթ մի տղայ կ՚ճարես։

—Տղա կճարեմ... օ՜հ, մի՛ ասիլ այդպիսի բան, նա որ ինձանից հեռանայ իմացիր, որ ես մի օր կենդանի չեմ մնայ։

—Քիչ դուս տուր, կ՚մեռնիս որը չէ հա... երաբ գիտենամ նրա ընչին ես հաւանում, մի դարդակ տղա է ոնչ փող ունի. ոնչ......

—Հա դրուստ ես ասում հարսի ջան, ես լաւ գիտեմ, որ իմ ախպօրնէրու անումին լայեղ չի. հմա դէ ինչ անեմ, որ սիրտս կ՚պելա, մի օր որ նրան չեմ տեսնում հենց գիտեմ աշխարքս քանդվել ա։

—Դէ ինչ անեմ որդի ջան, ըտոնք ընդուր ես ասում, որ քու մօրը ասեմ. հմա դէ ինչ անեմ ժամանակս փոխվել է, լաւ սրտով ուզում եմ որ ասեմ, էն օրը Վարդըն էլ էր մեր տանը ինձ ասաւ որ ես էլ մօրդ ասեմ, հմա ինչ անեմ քու մէրը մի կռվարար զատ է, հենց կգիտենայ ես եմ էդ բանի զարթնացնողը։

—Բա ի՞նչ անեմ։

— Գիտես ի՞նչ կանես, դու քու ախպերակնգանը ասայ, նա էլ իր մայրդուն կասէ, թէ բան չինեց էնա նա կ՚չինէ:

Այս խօսակցութեան ժամանակը մտաւ Ղաչաղանցի Բէգոն: Մանիշակը տեսնելով, որ էլ չի կարելի խօսել դուրս գնաց:

## Դ.

Արեգակը մօտ էր մայր մտնելու. Վարդը տեսաւ Մանիշակի միջնեկ եղբօրը՝ Գիքոյին ձիուն նստած գնում էր Ջալալօղլի: Վարդի կօճին աչքու կանգնեց:

— Տօ էս ինչ բախտ ունիմ, էհ, ինչ ուզում էի Աստված տվեց, ոնց որ ասած է „քիօռ նա իստ էր, էքի գիօզ" հմի իմ բանն է, բաս լաւ էլաւ բանս լաւ, դէ, էլ ինչի եմ միտք անում քանի կարամ բանս շուտով տենում:

Վազեց մերձակայ գիւղը մի տասն շահու միրգ առաւ և դէպի Մանիշակը ճանապարհ ընգաւ:

Բաւականին մթնել էր. մեր վարդը հասաւ գիւղի ղրաղը, բայց մի ահ ծագեց սրտումը՝ այն



է վախենում էր, որ մի գուցէ եղբայրներից տանը լինին, ուստի առաջ վազեց Մարտիրոսի տունը, որ իմանայ միւս եղբայրները ո՞ւր են:

Հասնելուն պէս շունը հաչեց. Մարտիրոսը դուրս եկաւ:

— Հէ. հէյ..., քիմսան (ո՞վ ես):

— Մարտիրոս, ընտեղ արի ես եմ, քի մատաղ, գիտես էլ Մանիշակիս եղբայրները որտե՞ղ են:

— Օ՛հ ի՞նչ բաղդ ունիս տօ շուն, մի՛ վախիլ պատիկը ձորն է գնացել տախտակ կտրելու, էն երկուսն էլ խ...... են: Հարսներըն էլ օթախումը են, Մանիշակը ըմատաս մենձ տանն է:

— Հա՛... բաս լաւ եմ, լաւ......

Ասաց և դէպի սիրահարը ուղաւորվեցաւ: Տան դուռը հասաւ թէ չէ սիրտը լէքքաց, ոտները դողդողաց, վախենալով մի գուցէ ախպերներից տանը լինին: Փորը ցաւող ուչխարի պէս նստում էր ու վերկենում. կամ էս կամ էն պատուհանովը նայում, կտրովը քաշ ըլում անդամ գնում: Բաւական ժամանակ մնաց այստեղ ապա երեսին խաչ հանեց. Սուրբ Գէորգի անունը տվեց և տուն մտաւ: Մանիշակը այն երեկոյ խռովել էր իւրեանց տանըցոնցից, մտել էր մենձ

տունը: Մոլորված լինելով կամ գլուխը վեր էր դնում քիչ քնում էլ ետ զարթնում. մինչև որ քնեց երազում տեսաւ, որ Վարդը՝ եկել է իւր մօտ: Վարդը մտաւ թէ չէ տեսաւ պարկած կանները դես, դեն ձգելով ասում է

Արի Վարդ ջան.
արի անուշահոտ ջան,
Արի մի գրկեմ,
արեւիտ մեռնեմ
ոչ ոք չ'կայ մի' վախել,
անվախ տուն մտիր
շատ վախտ է տեսել չեմ
սիրուն պատկերիտ կարոտել եմ:

Այս խօսքերը որ լսեց Վարդը, գժված էր. գժված. եքսան գժվեց, ուզաց վեր կացնէ էլ եդ ղեմիշ չարաւ, դուռը ներսից կոխպեց, նստեց գլխի մօտ. ուզաց որ գլուխը վեր քաշէ դնէ իւր ծնկան վերայ՝ զարթնեց:

—Ո՛հ տէր իմ, աստվա՛ծ, իմ էտ ո՛վ ես... սա՛ տեննում, էս տեղ ի՞նչ ես չինո՛ւմ:

—Մի՛ շփոթվիր հոգի ջան, ես եմ ես, քու ազիզ բարեկամ Վարդը:



—Վա՞րդ...... ո՛հ ի՞նչ եմ լսում, էս ինչ անում է...... հրեշտակս... Վարդս:

—Հա՛. Վարդտ մի՛ շփոթվիր, մի՛ վախիլ ըստեղ ուրիշ ոչ ոք չկայ:

—Օ՛հ, Վարդ ջան, բա դու վախեցիր ոչ, էս տեղ ո՞նց մտար, կամ ինչ գիտեիր որ ախպերտինքս տանը չեն:

—Գիտէի որ ըստի չեն, էնդուր էկայ:

—Բա մեր հարսնէրը, մէրս տեհան ո՞չ:

—Չէ՛ նրանք օթախումը թուղթ են խաղում:

—Լաւ է, շները հաչել չեն. բա քի վրայ:

—Շները որա ճնանչում չեն, նրանք գիտեն ո՛չ, որ ես քեզ սիրում եմ: Շատ կանեն մի մանէթն էլ նրանց չալը տանի, կերթամ հաջիղարայ Տէր Գէվոյին գիր անել կ'տամ, կբերեմ կ'խմացնեմ, էլ խում կարալ չեն հաչել:

—Լաւ բան է, շների համար էլ ես փող մխում, գիր անել տալի:

—Տօ՛ մեր ջանը ըլի սաղ, հենց գիտես, որ չոբան եմ փող չունիմ, իմ Մելքօ ախպերը ըլե սաղ, քաղքիցը ամեն ամիս հարիր մանէթներով փող է ղրգում: Աստված գիտէնայ որ հըրսանիք ըլինք. հենց կպահեմ քի ոնց որ ան-



35797

տեկայ, կ'թողնեմ որ փէշիս ծէրը ցըխոտ ըլի:

—Ա՜յ էս ձմեռ հրսանէք կլինք ու կ'տէնունք թէ ոնց կ'պահես:

—Սիրտս դող ընկաւ, հմի մի որ օքմին գայ, հերիքա՛ հմի մեր բանիցը խօսենք. դըուստը ասա ուղիղ սրտով ես սիրում ի՞նձ:

—Ա՜խ Վարդ, երաբ գիդէնամ էտ խօսքը, որ ասիր դըուստ սրտով ասիր թէ սատանու– թենով:

—Շնորհակալ եմ սատանայ էլ խում շինե– ցիր:

—Ախր հենց խօսք ես ասում, որ մարդու դլի մազերը ցից ցից է ըլում:

—Ի՞նչ ա դըուստ չեմ ասում:

—Լաւ, մթամ դու գիդես ո՛չ որ իմ տէ– րը դու ես, մթամ դու գիդես ո՛չ, որ առանց քի մի օր ապրիլ չեմ:

—Լա՜ւ, հանաք եմ անում. առ էս միրքը կե՛ր, ու թէ կարաս մօրիցտ ու ախպօրտանցիցըտ մի խաբար իմացիր:

—Ը՜… լաւ միտս գձեցիր, ես էն օրը Նըխտո– յին ասի, որ նա իմ մօրը ասէ, հմա չարաւ:

—Խսի նրանից ինչ էր գնում:



—Ի՞նչ պըտի գնայ:

—Բա ըսկի բան չի ասա՞ւ:

—Ոնց չէ, ասաւ «քու մէրը կռվարար է, ես որ ասեմ հենց կ'գիտենայ ես եմ էդ բանի սա– բաբը: Լաւը էն կլի դու, ասես քու Գիքոյ ախ– պերակնկանը, նա էլ իր մարդուն կասէ, թէ բան չինեց էնա նա կշինէ:»

—Ըժում, ե՞րբ պտիս ասի:

—Ես էլ չի գիդեմ խաչ գիդենայ… երաբ ոնց սիրտ անեմ:

—Խըի՞, ինչես սիրտանում, էն ինչ ա որ:

—Ի՛հ քու դըուխը չունիմ. հենց խամ խամ խօսում ես, որ կասէնաս գեղըցի չըլես, բա դու գիդես ոչ, որ մեր գեղումը՝ ախչկանը որ քուռի էլ տան կերթայ, նա չի փեսայ բռնում:

Այս սէրտ խօսակցութեան ժամանակ Մա– նիշակի եղբայր Սօսին, որ գնացել էր տախտակ կտրելու դուռը ծեծեց: Վարդը շատ վախեցաւ, այնպէս կարծէր թէ գիտեն նորա լինելը և կա– մենումեն բռնել:

—Վայ մէ Մանիշակ ջան; էս ո՞վ է որ էկաւ, վայ մէ տունս քանդվեց:

—Մի վախիլ Վարդ ջան. դու թէ կարաս թոռնածակովը դուս թռի:

—Հա՛, հա՛ դէ չուստ արա՛ ուրա Թոռնածակը շանցտուր է։ Ա՜խ երաբ գիդենամ էս ինչ կրակի մէջ ընկայ։

—Մըքի՛չ կաց քիչ խօսանք, ով գիդէ մեր լակոտներն են։

—Ջէ՛ քի մատաղ չէ՛, սիրտս լքլքում է, հլա մի ձեռքտ սրտիս վրա դի։

—Աղըաթխնեբ խի ես վախում քի ի՞նչ կայ։

—Դէ լաւ չուստ արա՛, ինչ ասում ես ասա՛։

—Դու թէ կարաս կիրագի օրը կէս քշերին արի ախպէրը ես էլ ընդի կլիմ։

—Ջէ քի մատաղ կարալ չեմ, ոչխարը սարը պտի գնայ ես էլ գնալ պտեմ։

—Բա ե՞րբ կգաս։

—Էլ ուր եմ գալի, էնա դուք էլ էս մօզին շապտներումն կ'գաք։ Սիրուն ընդի խոտերում, ռանգ ռանգ ծաղիկներում քէփ կանենք, սիրուն......

—Դէ մնաս բարով։

—Գնաս բարով։

Միմեանց փթաթվեցան, լաց եղան և ապա Վարդը դուս թռաւ Թոռնածակովը։ Ապա



Մանիշակը Թոռնադուռը փակեց միրքը թաքցրեց և սուտ իրան քնակոլոր ներկայացնելով՝ կոտրատվելով, օրշտալով, աչքերը տորորելով դուռը բաց արաւ։

—Ախչի էս ըղդամ վախտ ի՞նչ էիր շինում։

—Քնած էի։

—Քնած էիր, բաս էն ո՞վ էր որ դու հետը խօսում էիր։

—Ես օչում հետ խօսել չեմ։

—Խօսել չես լաւ լաւ...... ուր է նանը, հարսները։

—Գիդեմ ո՛չ, ըվատաս օթախումը ըլին։

Ինչպէս երևում էր Սոսը մի բանի հոտ էր առել, բայց լաւ չէր իմանում թէ ինչ բան է, բարկացած հայհոյելով դուրս գնաց. օթախը մտաւ քնեց։ Մանիշակը տեսաւ որ իւր եղբայրը բանի հոտ է առել, այնուհետև սկսեց քաղցրութեամբ խօսել վախենալով, որ մի դուցէ տանըցոնց ասէ։

## Ե.

Միւս օրը Մայիսի քսանուհինգն էր մեր գիւղի ծերերը հաւաքվեցան Դօխնանց կտերը

և սկսեցին խորհուրդ անել թէ ով ում հետ սարը գնա:

Իսպախանանց Ստեփանը իր փիլօնը ծածկած, քօշերը հաքին, երկայն գաղուկես չիբուխը բերնին գնաց մէջներուն ձգւեց, չիբուխը փըշտփշտացնելով:

—Ստեփան աղա դու ուզնարտ ո՞ւմ հետ ես խառնում, համ որ սարը պտիս գնալ. ասաց Իմամղուլանց Աղաջանը:

—Ես վեր եմ կալէլ օղբաշով (1) Նեզվարը, ով կուզէ թող գայ ինձ հետ:

Ո՞նց..... տաւարին ի՞նչ ես տալիս:

—Տաւարին մի ըբասի, հարիր ուզնարին մի մանէթ:

—Տղի՛րք ի՞նչ է՛ք ասում համկալ դառնանք թէ չէ: Ասաց Աղաջանը:

—Դէ հմի ինչ կայ կայ նոր հարևանից ջոգվէլը էլ չի լաւ. ասաց մի տղայ բազմութիւնից:

Եւ վճռեցին որ բոլորն էլ համկալ դառնան, բացի Դաւթանցից, որ կռվարար էին: Վարդն ու Մանիշակն էլ գնացին սարը: Մանիշակի եղբայրը մի ամիս մնաց սարումը. Վարդը նորա

(1) Արօտա գլուխ.



պատճառաւ մի ամիս չկարաց Մանիշակի հետ խօսել: Էս մի ամիսը նորա համար մի տարի էր: Անդադար սպասումէր թէ երբ պէտք է Գիքօն գիւղը գնայ: Վերջը սատանի աչքը դուս եկաւ գնաց գիւղը: Վարդը ուզաց որ մի տարուայ կարօտը հանի գնաց իր ընքաւոր Օսանի մօտ և պատուիրեց որ մի միջոցով Մանիշակի հետ խօսել տայ:

—Օսան ջան, քի մատաղ մի ամիս ա Մանիշակիս հետ խօսել չեմ, հենց գիդեմ մի տարի ա: Սիրտս հենց թխվէլ է, որ էլ գիդեմ ոչ հա:

—Ես մօրը կ'կանչեմ ըստի կ'խօսացնեմ, դու դագէնու եդէվովը գնայ Մանիշակի կուշտը:

—Բաս ես դուս ըլիմ դու կանչէ:

—Հա դուս էլ: Թամար հարսի տրի մէջ խօսենք:

—Հրես կ'գամ Օսան ջան, քիչ կաց ձեռիս բան կայ:

Փոքր ժամանակից յետոյ Թամարը վերցրեց գուլբէն և գնաց Օսանի մօտ: Վարդը օգուտ քաղելով դագէնու յետեվովը գնաց ալաչուխը մտաւ՝ Մանիշակի մօտ:

—Բարիլիս քի Մանիշակ ջան։

—Վույի աստծու բարին քի, աղչի բա մե-րըս տեհաւ ո՞չ։

—Մօրըտ աչքերը հենց չեմ կապել, որ տե-նու։

—Հը, ըմաստաս դու իր ասել Օսանին որ կանչէ։

—Հա, ես ասացի որ կանչէ դու խօսացրու մի գնամ Մանիշակիս տենում։

—Ի՞նչ է, շատ ես կարօտել։

—Ի՞նչ ես ասում սիրտս թխվել էր, ամեն աս-տծու ըրիգուն երազում տենում էի։

—Բաս արի՛ մի պաչեմ։

—Արի՛ քի մատաղ արի՛, ինչ որ ըրեւում ա դու էլ ես կարօտել։

—Ես էլ եմ կարօտել բա ինչ ա։

—Բա խիչէիր մեմէն վախտ դարի տակը գալի։

—Ախպէրս ըստի էր, վախում էի օքմին տե-նու ու ախպօրս ասեն։ Աստված ոչ արած որ իմանայ ինձ սաղ սաղ ջուրը կ՚գձէ։

—Մանիշակ ես ի՞նչ անեմ, որ քու մօր ըստի վախտն էլ գամ հետս կախ չանէ։

—Գիդես ինչ կանես՝ ոչխարը կթելիս քօ-մագ արա, կաթը դու շալկէ բի, գնում ես չուստ



չուստ փէտի մեր փէտը, որ հասնու մեղ համար էլ բի, Ղարաղամթ բի․ ըստոնք որ կանէս նա էլ ամեն օր քի կ՚կանչէ հաց կուտացնէ հա ընդով նա էլ ըլէ մեր կշտին բան չկայ, մենք ջիրուր կօխկի կ՚նստինք ու մեր բանը կտեսնունք։ Ձեռով էլ խօսել չի գիդէ իմ մէրը․ ինչ ըզամ կու-զենք կ՚խօսենք։

—Բաս լաւ, հմիկենց եդը քու մօր բաները չիմ ես կշինեմ։

—Ա՛ռ էս խէրը գնայ, ոչխարը հրէն ճաշկիթ էկաւ մերս հրէս կ՚գայ կթիչը [1] վերունելու։

—Դէ ճնաս բարով, հմիկենց եդը մեր կօ-ճին ալչու է։

—Ո՞ւր ես գնում, որ ճնաս բարով ես ասում։

—Տնաշէն դուս եմ ըլում ալաչուխից, ուր եմ գնում։

—Դէ լաւ գնաս բարով։

Վարդի դուս ըլելուց յետոյ Մանիշակը դուրս ածաւ նորա ոտի հետ տուն եկաց ցեխը, երեսը լուաց, քրքրած մազերը սանրեց, իբրեւ ոչինչ և սկսեց նինրի տալով կար անել, որ մայրը բոլորովին բան չի նշմարէ։

---

(1) Ոչխար կթելու պղինձ։

Մայրը եկաւ, բայց ոչինչ չի նշմարեց բացի այն՝ որ ալաչուխի սնայ փայտը (մի սին է որի վերայ կառուցած է ալաչուխը) միմեանց գրկելու ժամանակ գլպելէին փոքր ինչ ծռվել էր:

—Ալաչի էս խմ՞ է ծռվել.

—Գիտեմ ոչ. քամի փչեր ըմառաս նա ծռեց:

—Բա էս ի՞նչ անենք, մեր տղերքը եղի կ՚ըգան, ում՝ շինել տանք:

—Ընքնի.. ըըը... Վարդին տամ նա կշինէ:

—Հա, էտ ինչ լաւ միտս գձէցիր է, բաս ոչխարի կթից եղնայ կանչեմ շինէ: Կթիչը բի ոչխարը եկաւ:

Այն օրից սկսաց Վարդը ամենայն կողմից աշխատում էր, որ մի հնարքով կարողանայ խապախանանց ալաչուխը սլքվի: Ուրթումը Վարդից աւելի ոչ ոք չկար, Մանիշակի մայրըն էլ իւր կողմից էր աշխատում, որ Վարդի սիրտը շահէ, բան շինել տայ, ուստի ամենայն օր կանչում էր ձուաձեղ ուտացնում, սեր ուտացնում և զանազան աչեղ կերակուրներ: Վարդն էլ հենց այդ էր ուզում, նա էլ իւր կողմից էր աշխատում: Այսպէս մեր Վարդը տուն սլքվեց, այնուհետև գիշեր ցերեկ այնտեղ էր լինում: Քե–



փեր էր՝ որ անում էին: Այսպէս քեփեր քաշեցին մօտ երեք ամիս:

Մի օր Մանիշակի մտքում մի բան ծագեց՝

—Վարդ ալի ինչ կլի կլի մեր Աղի մօտ մեր չօբանին ղրգէ տեհնունք ի՞նչ է ասում, բալքի նա էլ է ուզում. չ՚կել երբ ընենց կուչ ու հուրդաէլ է ուզում. ըմ յիլուր սիրենք: Համել թէ կարաս գնա մի գիր անել տու Հաջիղարայ տէր Գէվոյին:

—Լաւ, բաս դեռ ես կերթամ գիր անել կտամ, ըժում կ՚գամ Վէտոյին կ՚ղրգեմ:

—Ե՞րբ կերթաս:

—Ես... էքուց ըռաւօտը վաղը ծեքելուն պէս կերթամ: Կացի, որ ախպէրտ ղարուլ չանէ ըժում:

—Ըժում, ըժում, էնա դու կ՚փախցնես կըտանես եա կօղէս, եա Ջառինտաղ, որ օքմին սկի խեալ չ՚անէ, թէ որդի ենք:

—Բաս լաւ:

Միւս օրը առաւօտը վաղը Վարդը թամքեց իրանց կարմիր քահլանը և գնաց Հաջիղարայ Տէր Գէվօյի մօտ գիր անելու, մի սհաթում թևաւորի պէս հասաւ տէրտէրիս մօտ:

—Ցահնի՛ա տէր:

—Աստված օւհնէ, հը՛ որդի ի՞նչ խաբար է, գիր անելու ես եկե՞լ։

—Հրաման քեզ տէր տէր ջան, թէ քու կարքը կըսիրես մի լաւ սիրահարական գիր արա։

—Օրհնեալ, էդ ես գիտեմ, բա ես քի համար դէշ գիր կանե՞մ. իմ կարգը գիտենայ հենց գիր կանեմ, որ քարի վրա էլ դնես ծոլթ անէ։

—Տէր տէր ջան դէ շուտ արա, ոչխարս անտէր անտիրական թողել եմ եկել ըստի։

—Լաւ օրհնեալ, դէ դու մի երեք մանէթ տո՛ւր, որ Աստծու փաթրեթի ըղաքին մոմ վառեմ, որ ինձ լաւ իմաստութիւն տայ ու գիրը ընչի համար ուզումես լաւ կտրէ։

Տէր տէրս երեք մանէթը առաւ,
երգով եռանդոտ թռաւ,
նարեկը ձեռին վերցրեց,
մի երկու տող գուս դրեց,
երեք անկլինանի ծալեց.
«ահա՛ որդի էս գիրը,
«էս տար գձիր նրանց ջուրը,
«եւ սա՛ թող խմէ,
«իսկ էս թող շորերիցը կարէ»։

Վարդը գիրը ուրախացած առաւ տէր-



տէրի ձեռքից, երեք անգամ գլուխ տվեց, աջը համբուրեց էլ եդ իր քահլանի վերայ նստեց և ճանապարհ ընգաւ։ Արեգակը թեքվել էր որ Վարդը իւր բնակարանը հասաւ։ Հասնելուն պէս վէտոյին ուղարկեց Սոնվան աղի մօտ։

—Վէտոյ ախպէր՝ էս որ դու իմ հէրն էլ ես մէրն էլ, գիտեմ դու լաւ գիտես մեր գեղի օրէնքը՝ ազատ տղէն իր ծնողներին ասել չի թէ՝ ինձ համար էն փլան աղջիկը ուզեցէք, ընհենց էլ աղջիկը։ Խեղճ ախչկանը. որ քոռի էլ տան սկի ծպտալ չի, հըմա որ քաղքումը ըլիս մինէլ կտէնուս եռասուն տարէկանը մի օրու-մը նշընվեց էլ, հրամնիք էլ էլաւ, նրանց ի՞նչ կայ, չիմն էլ խափեփայ շներ են։ Բաղում ման-գալիս, մինէլ կտեննուս քի աչկով արաւ, նարդ-խաղալիս ճմթէց, եա ոտըտ կոխեց, թուղթ խա-ղալիս ձեռքտ քորեց, թէ մի խալվաթ տեղ էլ ընկար վայ քու մեղքը, մինէլ տէհար զոռով տարաւ օթախը ու եախէտ կտրեց՝ ինձ ուզէ, հազար թումանն փող ունիմ, լաւ տուն, լաւ բաժինք։ Հմա չիմ սուտ, ի՞նչ բաժինք, ի՞նչ փող, Աստված ոչ արած թէ մի երկու հարիր բե-րուց, մինէլ կտէնուս մեծ սրտով ասաց «արա

էս գիշեր պխտիս տանի՛ վեչեր, էս գիշեր բաղ, էս գիշեր «Թամաշայ» ըսէնց անելով երկու իր գինը հանումէ, ըռանց քոծն ու բիջը, որ չեմ ասում: Էն ինչ մենք ենք, լաւ գիտենք, թէ ընչի տէր ենք, ոնց նա ինձ կարա խաբել, ոնց ես նրան: Համել էն, որ մենք էրեխայ վախտից ժիրուր սիրել ենք, խում գիտես, որ մին սիրով ընգան էլ նրանց հեռացնել չի ըլել:

—Տօ, էտ քաղքի բաները քի ո՞վ է սովրցրել:

—Իմ ախպէրը ընդի չի…

Էլ երկարացնելու վախտ չի, քի մատաղ դու լաւ գիտես ամէնը, գնաս բարով:

—Լաւ, լաւ, դու միամիտ կաց, ես լաւ գիտեմ ամէնը… Գնաս բարով:

Ասաց ու ձիուն օզանգուեց, թռաւ անյայտացաւ:

Գ.

Բաւական գիշեր, էր անցկացել, լուսինն էլ մի օրավարաչափ բարձրացել էր Զաւինոտաղի դագաթից և ճառագայթները ուղղակի գձել էր Խապախանանց տան դուռը, որ Վէտոն հասաւ:



—Բարի ըրիգուն քի Սանվան աղայ:

—Աստծու բարի, էս վախտին ի՞նչ խաբար է:

—Խէր խաբար, Զուրաբանց Վարդը ինձ ղրգեց քու կուշտը. Մանիշակին ուզում է:

—Հա՛, ես քեզ ասումեմ, որ մին էդ խօսքը բերնիցդ դուրս թողիր, էլ թողուս ո՛չ:

—Խի՞ աղայ:

—Խի սըտի, ես նրա լայեղ աղչիկ չունիմ, նա ում շունն ա, որ ես նրան աղչիկ տամ: Կերթաս իմ մօրը կասես էս ինչ եմ լսում, խելք ունիս մըօիթ կաց աղչկանդ, թէ չէ կ՚գամ էդ ըլաչուխը գլխիդ կ՚քանդեմ:

—Լաւ աղայ ջան, ես մեղայ աստծու, ձեր կամքն ա:

Միւս օրը Վէտոն դեպի սարը ճանապարհ ընկաւ: Բաղուկը խելի բարձրացել էր և ցոյց էր տալի, որ արդէն կէս գիշերը անցել է, իսկ լուսնեակը, որպէս արեգակ լուսաւորում էր մերձակայ դաշտերը և ձորերը: Վարդը իւր ոչխարները արածացնումէր և իւր քաղցրահնչիւն շհուով այս երգը երգում:

«Եղբայր իմ Վետօ,
«շուտ համբաւ բի ուրախութեան,

«իմ Մանիշակի ախպերը
«տվէ՛ց ինձ իր քիրը»:

Վետոն այս երգը լսելով, վերցրեց իւր շչուն և պատասխանեց.

«Եղբայր ջան, բանը չելաւ,
«Մանիշակը քեզնից հեռացաւ.
«երանի ոտս ճամփին կոտրեր,
«էս դառը ջուղաբը ականջս չլսէր»:

Վ ա ր դ

«Եղբա՛յր շուտո՛վ ինձ հասի՛ր,
«սիրտս գնաց, ինձ փրկի՛ր»:

Վետոն այս վերջինս որ լսեց, ոտքէս ծիտ թռաւ, հասաւ Վարդին. տեսաւ սիրտը գնացած, գետնին վայր ընկած: Նշաւած տեղը այնքան դէս ու դէն ձեռները քարերովն էր տվել, որ արիւնը ինչպէս աղբիւր հոսում էր. տեսնողը այլ ևս յոյս չէր ունենալ նորա կենդանանալուն: Խեղճ Վետոն ջրի համար դէս ու դէն վազեց, բայց բոլորը 'իզուր:

Ծարահատած սկսեց լեզուից, ականջից, կռնատակից ձգձգսել, իր չօքանի զլամթլաշով բազկից արիւն թողնել:



—Տօ քեզ ի՞նչ էլաւ... Վա՛րդ... Վա՛րդ...

Բայց ո՞ւր ա Վարդ—մօտ երեք ժամ լսելուց յետոյ, մի.քանի անկապ ձայն լսվեց Վարդից:

—Մանիշա՛կ...... ի՞նչ...... հա՛......

—Ա՞ գաղա՛, դո՛ւ մի աչքերտ բաց արա՛ տես ո՞վ եմ:

—Հը՞...... ես...... դու...... ո՛հ......

—Տօ՛ աչքդ բաց արա՛ քեզ եմ ասում քեզ:

Փոքր ժամանակից յետոյ, աչքերը բաց արաւ և լաց եղաւ:

—Ո՛հ, էս ի՞նչ անուշ քնած էի, տօ՜......

—Քու դուշմանը քնի էդ քնով ու քու Ստեփան աղէն: Տօ՛ ամօթ չի քու տղայութեանը, բա ամանչում չես. մի աղջկայ հմար էտ տեղն ես ընկնում:

—Ա՜խ երար գիդենամ, էդ ո՞վ ես, որ ըթենց խօսում ես:

—Ես ե՛մ, ես Վետոն:

—Վետոյ...... ա՜խ Վետո՛, ընդուր որ սէրը տեհած չես, մի սիրահարութեան մէջ ընկի, ընդով իմ դարդը կիմանաս:

Բաւական ժամանակից յետոյ ուշքի եկաւ

և սկսեց հարց ու փորձ անել իւր բանիցը։ Վետան եւ մի ըստ միօջէ պատմեց։

—Վետոյ, բաս որ բանը էդ տեղը ընկաւ ես խում գիդեմ, ում որ տան. Մանիշակը էլ իմ կուշտը կ'գայ։ Հմա արլի մի վիճակ գձեմ տեննում ոնց է դուս գալի։

Ի՞նչ Թավլուր վիճակ ա, հլա մի ասա տեննում։

—Ախ էս երեք քարը, եթէ վիճակը վերջանայ էս քարի վերայ, իմացիր ում որ տան Մանիշակիս, էլ իմ կուշտը կ'գայ։

Բրինձ, բրինձ,
աղա բրինձ,
չանիս տակին,
չալ մտանիք,
իլլու,
բիլլու,
կոընտոր, մատիկ։

Ը՜... ը՜... էս քարի վարայ ընկաւ, բաս իմն ա իմը։ Հմի ինչ կլի արլի մի չօբանի վիճակ էլ կայէն էլ անեմ, տեննում ոնց է դուս գալի

Ափնէթ, բուռը,
ափլին փնէթ, հաւի ծուռը.
քի ո՞վ կտրեց, միան կուռը,



դօջա պապէն. վրացու շաջը,
ընչի՞ հըմար, Թուրքի մաճը,
դաղի համար, ուղուր ես,
սուտ մի՛ ասի՛լ, թէ ծուռուր.
հօքուտ մեղքա ուղուր ես,
ուռը, թէ ծուռուր.

Օ՛հ էս էլ ընկաւ, ջա՜ն, ջա՜ն, բանըս լաւ է։

—Երանի ըդեց ըլի ուրա՛։

—Ես գիդեմ, որ ըսենց ա։ Է՜... երբ էր հա՛, որ Մանիշակը ինձ ասաւ «ում որ տան, էլ քու կուշտը կ'գամ»։

Թո՛ղ աստւած լող կատարող ըլի։

—Ըսենց ա՜ ըսենց, դու քեփիթ կաց։ Էս անցկենող ըրիգունը իմ խնամ խօսելու ըրիգունը էր, չէ՞. հմա մեր Ստեփան աղաղադէն ղարուլ չարաւ, հենց գիդէ՝ էլ իմ ասածը չի ըլել, էս ըրիգուն արի մի քէֆ անենք, Ստեփան աղի աչքը հանենք։

—Ոնց քու կամքն ա՛։

Տղերքը մի դոռոնջ (¹) կրակ վառեցին և մի ահագին գառը մորթեցին, բոլոր տաւարած-

(¹) Աւելի բորբոքուած կրակ։

ներին հրաւիրեցին, քէֆ արին մինչև լոյս: Մանիշակը այս ուրախութիւնները տեսնում էր, նա այնպէս կարծում էր, թէ Ստեփան աղէն համաձայնուել է, այն գիշերը հազիւ լուսացրեց:

## Է.

Միւս օրը, Մանիշակի մայրը գնաց խնամղուլանց Նաթելի մօտ՝ չայ խմելու, Վարդը լաւ միջոց համարելով, որ կարող է բոլոր գործի հանգամանքները համարձակ պատմել. մտաւ Մանիշակի մօտ: Մանիշակը տեսնելունպէս իմացաւ որ նեղացած է, սկսեց հարցնել:

—Վարդ ջան, էդ ի՞նչ խաբար է:

—Էլ ի՞նչ... ի՞նչ խաբար է, ախպէրտ տալիս չի:

—Խի՞, ի՞նչ է ասում:

—Գիդես ոչ ի՞նչ կասէ. ասել է «ես դաղի աղջիկ չեմ տալ»:

—Էդ խօսում ես երբ էր որ ասի հա՛: Բան չ՛կայ ես ու դու ինց որ գիդենք, ընհենց կանենք:

—Էդ խօսում կայ ու կայ, ես ուզում էի, որ ինքը իրա կամքով տայ, դէշութիւն չ՛կի:



—Էլ ուրիշ բան չի՞ ասել:

—Ասել ա՛ մօրս ասա՛ աղջկանը մտօքիթ կաց, բան չի դուս գայ, թէ չէ կ՛գամ էդ ըլաշուխը գլխիտ կ՛քանդեմ:

—Բաս էդ, Վէտոյին ասա՛ մօրս ասէ ո՛չ, թէ չէ էլ քի տուն չի թողուլ, համէլ որ հարցնէ „թէ էրէգ որդի իր‟ թող ասէ ոչխար էր կորել գնացել էի մանգալու:

—Մանիշակ հմի ըսկի օչում բան չի ասես. չ՛կել գեղը գնալը, որ գնանք ընդով դու քու ախպէրակնանոց բանը չ՛լսես, խռոված կա՛ց, ընդով գլխի կնգնին, որ ինձ ուզում ես, հա ինձ կտան: Այսպէս ծածուկ իւրեանց հարաբերութիւնը մօտ երկու ամիս շարունակեցին:

Լալվար լեառը, որ իւր ճիւղերով բռնած ունի բոլոր Լօռին, իւր խիտ անտառներով պահպանում է Լօռւոյ՝ կախարդ ձմեռուայ ցրտից, իւր անուշահոտ ծաղիկներով մատակարարում է անասնոց, իւր սառը աղբիւրների ջրերով զովացնում է ամառը տօթից խաշուաց, թուլացած ժողովրդոց սիրտը: Այսպէս մեր հին, հին դարերի թանգարանը. բարձր լինելով բոլոր Լօւոյ լեառներից: (բարձրութիւնը է մօտ

7000 ոտնաչափ) Ցուտով ցրտեց, շուտով իւր ալեւոր գլուխը ծածկեց սպիտակ գլխարկով, շուտով մտաւ ձմեռուայ պատրաստութեան մէջ: Խոտերը դեղնեցան և անասնոց արօտը պակասեց: Այս տեղի ուրթվորները ցրտից ստիպուած գնացին գիւղը:

Մանիշակը այնուհետև չէր լսում իւրեանց տանըցոնց խօսքը, միշտ քնթ ու պռնգով էր խօսում, այս բանը Ստեփան աղէն տեսնելով և մտքում ունենալով այն խօսքը, որ Վարդան ասել էր, կանչեց Մանիշակին իւր մօտ և հարց ու փորձ արաւ, տեսաւ որ հաքէս մտքումը կայ Վարդին ուզելու, վերկացաւ տեղեցը, մի՛ գրեմասի ճիպոտ ձեռը կալաւ և Մանիշակիս մէջքին. ով կուտէ Մանիշակը կուտէ, ով չի ուտել Մանիշակը կուտէ, այնքան տվեց, որ տեղնուտեղը վայր ընկաւ: Քանի տալիս էր, այնքան Մանիշակը լաց լինելով այս երգը էր ասում:

—Վա՛յ, վա՛յ, Վարդ ջան,
իմ աղւոր սիրեկան ջան,
ինձ սպանումեն,
քեզանից հեռացնումեն,
չէ՛, չէ՛. չեմ հեռանալ,



քեզանից աւել ուրշի չեմ գնալ,
թէ կուզէ սպանեն
էս օր ըվետ թաղեն:

Մանիշակի բաղդից Ստեփան աղէն բոլորովին կատաղած, շփոթված, չէր իմանում թէ ինչ է ասում, այլ այնպէս կարծում էր, թէ միայն լաց է լինում և բոլորովին նորան անգամ չէր գնում, այլ միայն բղաւելով ծեծում էր:

—Ըհը՜. ա՛ռ հա՜. դու կուզես Զուրաբանց գաղին, առ հա՜... ուզէ... կերար էլ, հմի էլ կուզես:

Բաւականին ծեծելուց յետոյ գձեց մի մութը գոմ և մի ամիս ևս այնտեղ բանդարկեց:

Խեղճ աղջիկը տեսաւ որ այլ ևս չեն դուս թողնում, որ գոնէ շապտէնը մի անգամ Վարդին տեսնու, ուստի սուտ խօսք տվեց որ ում տան առանց ձայն հանելու, առանց ծպտալու գնայ, և այսպիսի խորամանկութենով դուս եկաւ, մութը, լզօտ և հոտաց գոմից:

## Ը.

Ամառը անցաւ. տխուր աշունքը սկսվեցաւ: Այգեհասու ծաղկափթիթ դաշտերը. ողկուզա-

ն բաղերը. անուշահոտ հովիտները իւրեանց գեղեցիկ զգեստները փոքր առ փոքր սգաւորի զգեստի էին փոխում:

Անցաւ օգոստոս, սեպտեմբեր ամիսը, եկաւ հոկտեմբերը, մօտացաւ Ջալ պասը, աղջկերանց նշանվելու օրերը:

Հոկտեմբեր ամսի տասնուութն էր, սուրբ Նշանի ուխտը: Այս օրը ամէն ապաւի թէ տղայ թէ աղջիկ պէտք է այնտեղ լինին, որ միմեանց տէնուն, միմեանց սիրեն: Մանիշակն էլ ապաւի աղջիկ պէտքէ այնտեղ գտանուի, ուստի առաւօտը վաղը Ստեփան աղի կին Սոփիօն վերցրեց Մանիշակին, գնաց և տարաւ Սուրբ Նշան: Ամէն մարդ ինչպէս թագաւոր քէֆ էին անում և ժաժգալի, որ կասես դարդ չունին: Մանիշակի համար այս ուրախութիւնը սուգ էր, նա աչքը գձաց ճանապարհին նայում էր թէ երբ պէտք է գայ Վարդը: Նորա թայգաշ աղջկերքը շուտ շուտ ասում էին «թէ ինչի ես տխրած» բայց նա բոլորին պատասխան էր տալիս «էս ընիգուն մրսել եմ գլուխս ցաւում է: Այս տխրած ժամանակը մինչև տէնուս Վարդը նստած մի սպիտակ քահլանի վերայ, աչքերը դէս ու դէն



ձգելով Մանիշակին մանգալով հենց քշում էր, որ խեղճ ձին հա էր անում կխաւմը տրաքվի: Ուխտաւորները իւրեանց ուխտը մոռացան, բոլորն էլ նորան էին նայում:

Աղաւի աղջկերքը բոլորեքեան երանի էին տալիս Մանիշակին, որ այնպիսի փեսացու ունի, իսկ Մանիշակը աչքերը գետինը ձգած. երբեմն կարմրում էր որպէս ճակնդեղ և երբեմն դեղնում ռանգ ռանգ լինում: Վարդի այս կատաղած ժամանակը որտեղից որ էին դուրս եկան նորա ընկեր Աթանը և Գէվոն և սկսեցին իւրեանց ընկեր հետ զուարճանալ: Բաւական խաղալուց յետոյ եկան այն աղջկերանց դէմուդէմը վեր եկան ուր Մանիշակն էր և մի այնպիսի սեղան բացարին, որ տեսնողը կասէր, էրնակ ոչինչ չուտացնեն միայն մօտիկ անել տան, սոցա մօտ հաւաքվեցան իւրեանց ընկերները, բոլորի գլուխն էլ տաքացաւ, սկսեցին բայաթի կանչել կարգով: Կարգը հասաւ Վարդին: Վարդը աչքերը ձգեց Մանիշակի աչքերը, ձեռքը երեսին ու էս երգը վերցրեց:

Արի՛ գնանք սարը մորու,
Ես քի հանեմ ղամար ջրու,

Համար ջորին գինչի հանել,
օխտը սիրած մինչի հանել,
մի սին ես, օխտը գերան,
մի աղչիկ ես հազար բերան,
անունդ ա՝ Մանիշակ,
ոչով չ՛կայ, քանց քի շէշակ,
ուր որ գնաս ջուխտ դորակով,
եդնէտ կլիմ ալ քուռակով:

Ուռա՜...ա՜...ա՜... վա՜յ, ուռա՜ ա՜ ա՜, կանչեցին բոլոր տղերքը:

Բոլոր ազափ աղջկերքը հալուման էին ըլում, իրանց մօրը ասում՝ „նանի էս տղէն ո՞րդեանից ա. ինչ լաւ ասումա է՞“:

Մանիշակը տեսաւ, որ բոլորին յայտնվում է Ալթանին գլխով արաւ, որ այն տեղից հեռանան: Ալթանը իմանալով Մանիշակի խնդիրը, այն րօպէին վարդի կռնիցը բռնեցին, քաշտալով տարան հեռացրին:

Այս բոլորը Սօփիօն տեսնում էր, որ Մանիշակի համարէ, բայց վախում էր խայտառակվելուց, բան չէր խօսում: Երեկոյեան տները վերադառնալիս, Մանիշակը ծածուկ գնաց Ալթանի



ականջում ասաւ, որ այս երեկոյ գան աղբիւրը և փախչեն:

Այս բանը ինչպէս եղաւ Սօփիօի ականջը ընկաւ, այն երեկոյ տանիցը չ՛դուրս թողուց. ուստի Մանիշակը դարդից հիւանդացաւ: Սօփիօն կարծելով թէ աչքը են տվել կանչեց իւրեանց բիձոնց Մաթոյին որ աղօթէ: Մաթօն վերցրեց մի աչքատուլոնք և այս աղօթքը օրշտալով ասաւ:

«Դուստրու, դուստրու,
«որդին դուստրու,
«գնացի սև մէրին,
«շուր տվի սև քարին,
«դուս եկաւ սև օձը,
«Աստվածածնա բերանովը,
«Քրիստոսի աջովը:
«ջնջվի չար աչքը, չար ոտը,
«չար ձեռը,
«քար ու քացախ բերանը,
«փուշ ու տատասկ աչքերը»:

—Վայ քի ինչ չար աչք ա էլել: Ասաց Մաթօն կեղծաւորութեամբ, իբրև ոչինչ չ՛գիտէ, իսկ Մանիշակը աղբիւրի պէս արտասունք էր հոսում իւր աչերից:

Թ.

Մի շաբաթից յետոյ Մանիշակը վերկացաւ։ Վերկենալուն պէս վազեց Օսանի մօտ, որ մարդ ուղարկէ Վարդին յայտնէ իւր առողջանալը, որը ցնորվածի նման չօլերն էր ընկել Թվանքը ձեռին, որպէս զի կամ Ստեփան աղին սպանէ կամ իւրեան։ Այնպէս կատաղել էր, արիւնը աչքերը կոխել, պատկերը գարզանդուել, որ տեսնողը ահիցը կմեռնէր։ Ամենայն երեկոյ գալիս էր դուռը կանգնում. Թվանքը վերի ոտը քաշած և բղաւում:

--Տվէք իմ Մանիշակը, Թէ չէ տուններուտ կ՚քանդեմ գլուխներուդ, դուք ինչ իրաւունք ունիք իմ նշանածին ձեր տանը պահել, ասենք ձեր աղջիկն ա... որ ինձ սիրում ա ի՞նչ պտեք անել, զոռի ուզումեք ծեծելով հեռացնէք... չէ՛... չէ... Ստեփան աղաղատ, որ մեռնիս, որ կխուսմտ տրաքվի՛ս ուզել պտիմ, ուզել...

Մանիշակի եղբայրները նորա կատաղած ժամանակները, տանիցը դուրս չէին գալիս, վախենալով, որ գուլլէ կերակուր չ՛դառնան։

Մանիշակը տեսնելով՝ Վարդի այս կատաղութիւնը, մի երեկոյ՝ գնաց Օսանի մօտ ինչպէս



վերևը ասինք և ասաց, որ ասէ Վարդին այս երեկոյ ախպրումը կաց, ես էլ կ՛գամ, բայց ուրովհետև գիշերները միայնակ չէին դուս Թողնում, Օսանին պատուիրեց՝ որ գա Սոփիօյին ասէ, որ իւրեան դաստուր տայ իբրև տանում ա իւրեանց տունը շոր ձևելու։

Մթնեց, մոմերը վառեցին, Օսանը եկաւ Սոփիօի մօտ։

—Հարսի ջան մի Մանիշակին բան տաս, մի դոշլուղ կայ կարելու, գայ քօմագ անէ։

—Տար, որդի. հըմա շատ չի եղացնես։

Խաբեբայութեամբ հրաման առան, ինչ դոշլուղ, ինչ կար, և դէպի ախպիւրը ծկլտեցին (վազեցին)։ Այս երեկոյ բուականին մթնագիշեր էր, երկնքի վերայ մի պսպղուն զատ չէր երևում, մատըտ որ օքմնու աչք կօխէիր, չէր տեսնուլ։ Էս մթնագիշերում Մանիշակն ու Օսանը հասան աղբիւրը, բայց քամբաղտաբար Վարդին այնտեղ չ՛գտան, դէս վազեցին, դէն վազեցին, ոչ մի ձայն, ոչ մի շփընթոց չ՛լսեցին։ Շատ դէս ու դէն ընկնելուց. յետոյ լսեցին խօսոց։ Դէպի ձայնը գնացին տեսան, որ Ջրկիրների ձայն է։

—Օսան ջան, Ջրկիրներ են մի ճար արա, Թէ

չէ էսա մեռնում եմ: Ինձ որ էստեղ տեհնուն ի՞նչ կասեն, թէ էս վախտին ըստի ի՞նչ է շինում:

—Արի գնանք Չաղլախում տապ անենք չկել դրանց գնալը:

Մեր լեղաձաք աղջկերքը թաք կացան. Ջրկիրները եկան կուժներուն լուլը տակին դրին ու իւրեանց ծանր ու բարակ մասլահաթը սկըսեցին

—Ախչի՛ Քալօ՛ ասում են խպախանանց Մանիշակը սիրահարվել ա Վարդի հետ, ու Մանիշակին գձել են դամը էլ չեն դուս թողնում, ըղորդա՞:

—Մէնակ դու ես իգհատում... հա, քա, ջան. էս մօտիկ օրէրս նրա գլուխը հենց օղբաթ բերին, որ...

—Ի՞նչ օղբաթ:

—Էլ ինչ. ինչ օղբաթ, տուն էին գձել էնքան տուել, որ լաշը բերադի կապտել էր:

—Ըժում կոտրվի՞ց:

—Վալլա դրուստը գիդեմ ոչ, ասում են մթամ ասել ա թէ էս բանի անօղը Օսանն ա էլել... համէլ դրեր ա հանել, թէ «հրէսայի էս էլ Օսանը ինձ տուեց»:

—Բա, ասում են. ասել ա թէ իմ մօր մաղե-



րիցն էլ եմ տվել Օսանին, որ մոլլին գիր անել տայ:

—Հա, էդ էլ են ասում, հմա ով ա գիդում: իգհատեցիք են, մինը որ լսեն երեքը կասեն:

—Մթամ խի՞ չեն տալի Վարդին, ըղորդա լեզու չունի, հմա նրապէս ղօչախ տղայ չի ըլել, որ ուզենայ մի օրումը աշխարքս տակն ու վրա կանէ:

—Հվանում չեն, ուզում են չինովնիկի տան, հենց գիդեն որ էրկաթի կոռը քաշտալով մտն են գալի, ուսներուն էլ պսպղուն զադերը հա, փող են կտրում, գիդեն ոչ որ ջէբներումը մըկ-ներ են չիդիր խաղում, սոված օրական հացի համար ցինգ-ցինգ անելով փոռ քաշելով մտն են գալի:

—Մէրն ի՞նչ է ասում:

—Մէրն էլ իր մորթում չի կենում, նրան որ հարցնում ես թէ խիչե՞ս տալի, էն սհաթին պնչերքը վեր է քաշում, „աղչիկ տամ, աղչիկ, էն էլ Զուրաբանց խուլ տղին. ի՜... վայտամ նրանց գլխին, նրանց պէս նօքարնին տունս լէքն են:

—Ըշորթ... գլխիտ տրաքվիլը, ասայ, թէ նրանց պէս նօքարնի պահելու կարողութիւն ու-

նիս, խի՞ ես չ'կել շլինքդ պարտքում կորած: Օրը մի հետ Արդվինցի Սամաւորանց Թաթոսը դուռդ կոտրում ա՛ փող ուզում:

—Ախչի՛ նա էլ ա շըշացել, էնդդամ հըսկանում չի, որ ուրիշ տեղ էլ տայ, կենալ չի, դրանք հենց չեն յիրուր սիրել, որ էլ բաժանվեն:

—Ջիմ իրանից ա, էլ խի՞ չի տալի. էտ ընդով էր մտել արել, որ սաըումը՝ ամեն անձրև ըրխդուն Վարդին տանում էր իր ախչկայ տանատկին քնացնում, էդ ընդո՛վ էր միտք արել, որ ինքը ըլաչուխից դուս էր ըլում նրանց մենակ թողնում, բա չէր հասկանում որ հրեշտակներ էլ ըլին............ կը քունեին

—Հա էդ ըղորթես ասում, մի դարան թէ միտըտ ա ձեն ձեն էր ընդեր, թէ տղէն ասել ա, որ ջովէթ եմ դնում չանդ (1) օրը Իսպախանանց Մանիշակը յեղնէս գալիս ա:

Մի խօսքով երկուսն էլ մի գեղըցի, մի երկրացի, մի հողի վըայ մեծացած, ով որ դրանց յերըըանցից ջոգէ. իր օրումը հացի թիքա չի ճարել:

—Ի՛հ լաւ մի, էլ բան մի՛ ասել թէ աստ-

(1) Մուայլոտ:



ված կսկրես սիրտս նեղանում ա: Վերկաց գնանք, հրէն Շամկուր քշերք աստղը դուս եկաւ:

## Ժ.

Այս բոլոր խօսակցութիւնները լսում էին մեր աղջկերքը. ծիծաղներուն գալիս էր, բայց չէին համարձակվում մի ձայն, մի ծպտուն հանելու: Երբ ջըկլըները գնացին, դուս եկան և սկըսեցին նորից որոնել: Շատ որոնելուց յետոյ պատահմամբ գնացին կանգնեցին Վարդի վերայ, որ քնած էր. գլուխը դրած մի չոր քարի վերայ: Ցանկարծ որ աչքներովը ընկաւ շատ վախեցան կարծելով մի որևիցէ այլ մարդ, բայց երբ տեսան նորա հովուական չոմբախը, թվանքը և շհուն որք կոխքին դրած էին և նորա սիրելի պահապան սև շունը, որ գլխի վերի կռանըթև էր եղել, առաջի տոները դրել իր տիրոջ գլխի վերայ, իսկոյն ճանաչեցին թէ ով է, ապա աներկյուղ մօտեցան և զարթնացրին անուշ քնից:

—Վարդ, իմ սիրելի բարեկամ վե՛ր, ի՞նչ ես քնել էս չոլում չոր քարի վրայ:

—Վա՛հ, էս ինչ ձեն եմ լսում, կաանենաա

4.

իմ Մանիշակի ձէնը ըլի... հմա չէ ղալաղ եմ... երազ......

—Ղալաղվում չես, հենց քու սատծն է, քու Մանիշակն եմ:

—Մանիշա՞կ......

—Օ՛հ, անվախ աղջիկ ես վախտին ղուշը իր թևով, օձը իր պոռտով չի դուս գալ, դու ինձ սիրտ արիր ես կէս գիշերին, կամ քեզ ո՞վ դուս թողուց, չէ որ քու սուտ աղէն տանից դուս չէր թողում:

—Որ բերթումն էլ ըլիմ, դռանս կանգնած ըլին թոփ ու տապարում կորած տղերք, էլ ես քի համար դուս կըգամ թեգուզ գուլլախորով անեն:

—Բաս որ ըթենց սիրում ես ընհը՛ քի ըլի էս մտանիքը:

—Բա դու ինձ գիդէիր, քի սիրում չէ՞մ:

—Չէ...... ես......

—Հ՛ը, էլ ի՞նչ... ես... սատ տենում, ի՞նչ էիր գիդում:

—Ոչինչ. ես ընհենց գիդէի, որ դու էլ...

—Էլը... որնա՞ պարզ ասա:

—Ը... ը...



Սոցա խօսակցութիւնը ընդհատեց Մանիշակի եղբայր Գիքօն, որ ձայն էր տալիս Օսանի փոքր եղօրը, որ Մանիշակին տաէն գայ:

Մանիշակը, հենց որ լսեց իւր եղօր ձայնը, այն րոպէին ոտն ու ձեռքն թուլացան վախենալով, որ մի՛ գուցէ գնան տեսնեն այնտեղ չի: Վարդը վերցրեց իւր ինինջին ծածկեց Մանիշակի վերայ գդակն էլ գլխին, իսկ Օսանին հաքցրեց իւր չուխան և ճանապարհ ձգեց, պատուիրելով որ ճանապարհին ձայն չ'հանեն: Այսպէս ւըլըքալէ հասան տուն, ապա Մանիշակը իւր շորերով իւրեանց տուն գնաց:

## ԺԱ.

## Միջանկեալ պատմութիւն:

Մանիշակը կամաց կամաց տուն մտաւ, տեսաւ որ իւր եղբայրները, կնանիքը շարուած օջաղի ափին խօսում են, իսկոյն սիրտը իմացաւ որ իւրեան վերայ են խօսում. կանգնեց դռան մութը տեղը և ականջ արաւ:

—Ախպէր, գիդեմ ոչ թէ ինչ անեմ, էդ

ղանջղէն գվորը կորցնեմ. Թէ տալիս եմ էն շան որդուն, ամանչումեմ, ըժում կասէ „տեհա՛ր էլ իմ ասածը արի„ Թէ չեմ տալի մեզ խայտառակում ա. ասաց Ստեփան աղէն:

—Լաւն էնա չտանք. էգուց էլոր կ՚գայ դաւի կ՚տայ՝ ինձ էլ փայ տվէք Փողեցը. ըժում արի էշը ցեխցը հանէ՞—մայէնց շատ չունինք ու, Նրան էլ տանք եքսան կ՚կոլչէնք. ասաց Վախրամը:

—Խե՞, խիչէք տալի նա ձեր քէրը չի՞. դէ ինչ փայ կընգնի, տվէք, Թողէք կորչի ըլի. ասաց Սոսին:

—Զէնտ կորէ՛ ջիմար. քի ոչով խօսացնում չի. հա Նրան էլ փայ տու, ըժում լաւ մուլք կունենաս: Հրէս աչքտ կըհանէ Ուզունպարցի Օսէփ Մահմադը գայ իրանց փայն տանի ընդով խնլքի կգաս:

—Տանում ա տանի:

—Տօ՛ ջիմա՛ր, չէ մեր փայն չեմ ծախել՛ենք, նա էլ գայ տանի ըժում մեզ ինչ կըմնայ:

—Լաւ բան ա, համ ծախելենք փողը կերել, համ ուզումենք փողն էլ զաւթենք:

—Բա գիդես ոչ. հենց դրա համար եմ մեռնում:



—Հը՜... ընդուր համար ես փեշերով փող հվաքում թաժթուլանցոցէ ու մեր բիձոնցներից տալի կ... որ բան շինէ հա՞:

—Հա՛:

—Էլ անմեղ խփ ես մնխում, խմամղուլանցը խում տանիլ չի. մենք էլ նրանց Փողերից կըվարենք:

—Ի՞նչպէս չէ... գլխիտ տրաքվիլը, խմամղուլանք իրանք իրանց փայուցը քի Փող կըտան ըլի. ըվատաս որ մեռնիս Թողուն ոչ իրանց Փողում Թաղելու:

—Բա բանիցը էն ա դուս գալի, որ մենք հուփ հուփ *) Փող չունինք էլի:

—Նոր ես իմանում, որ մենք մեր փայն չեմ ծախելենք: Հմի ես ուզումեմ, որ մի հնարքով ես խմամղուլոնցէ եա Օսեփ Մահմադիցը մըքիչ Փող խլեմ, որ էքուց էլօր մեզ ըստեղից դուս չի գձեն:

—Հա՜ ա՜ ա՜:

—Հաւը աչքիտ տա ա՜ ա՜ ա՜, բա նոր ես իմանում:

—Բա Դժար ուրԹը ի՞նչ ա որ դաւի ես տալի:

—Դժար ուրԹը Թէ դրուստը կասես Թա-

*) Բոլորովին.

դաւորական ա, համա գիտեմ ոչ թէ էս ինչ թավուր բան ա. էսա քանի տարի կլի, ինչ մեր գեղցիք ըւանց օղբաշու գնում էին վեր գալի: Բազի վախտ էլ, որ ուրիշ գեղցիք գալիս էին, մեր գեղցիք էին նրանցից օղբաշի առնում: Մի-խօսքով ինց որ իրանց ամթապատական փող, տէր են լիս ընգել: Հմի ես ուզումեմ. որ մի հնարքով կարենամ ինձ վերայ հաստատեմ:

—Բա էն սուտ պրաֆէսոր Դամղածը խի է դաւի տալի, նրանք խուռմ մի պօչը կորած կատու էլ չեն ունեցել և չունին էլ:

—Դրան ես եմ ընկեր չինել, որ ախր դա Կ......ն ......էր: էն Կ...... դրա խաթեր լաւ կչինէ բանը:

—Նա ի՞նչ ա, որ լաւ կչինէ:

—Ո՞նց թէ ի՞նչ ա, նրա ձեռին է էդ բաները, ինց ուզենայ հընենց դուս կ'բերէ:

—Բա էն Սևուկը որ էկաւ ի՞նչ արաւ:

—Էն Սևուկը մեր տունը քանդեց, նա որ չէր էլել, էն ահաթին հստատել կուէր, համա էտ էտ իշի ճուտը տանական գիտեմ ոչ, որ տեղից դուս էկաւ: էկաւ սիրուն ամեն բանը տեղեկացաւ պրօտօկօլի վրայ էլ ձեռք քաշեց, թէ սաղ գեղինն է, բացի Դամղածից:



—Խի՞ նա մեր գեղցի չի:

—Նա մեր գեղցի է. համա սաաց նա ո՞վ է ըսկի չորս ոտնանի կատու էլ չեն ունեցել ընդէ ըրածելիս, ինց որ դու հմի ասիր, ըսենցով նա չինեց մեր գեղցոնց բանը և մերը փչացրեց:

—Ըժում բանը ո՞նց էլաւ:

—Դեռ հլա դամնում ա:

—Խի. խի՞չէք չուստ չինում:

—Ընդուր որ Դամղածը ուրիշ տեղ ա գնացել:

—Ի՞նչ անենք գնացել ա, գնացել:

—Ջէ... է... նա գնալիս Կ...... ասել ա, որ չկել իրան գալը թաքուն պահէ, որ կ'գայ ըր-ժում ինց մեր քեֆն ա ընհենց կանենք:

—Բա որ Սևուկը ձեռք ա քաշել, թէ չիմ-նունը ա:

—Ինչ անենք թէ ձեռք ա քաշել, դժար ա մեր Կ...... ձեռին, հէնց կ'կորցնէ, ինց որ հեր-վա ձինը:

—Ո՞նց կըկորցնէ:

—Ընհենց կ'կորցնէ, որ էն կ..., ուրիշ չի-նել կ'տայ:

—Աղա՛, աղա՛, դրա հետ խօսկը մի՛ դա շշա-ցել ա: Ես ասումեմ լաւն էնա մեր Պէպօ

միւսէն եկել է Ջալալօղլի էքուց չէ էլօր կըգայ ըստի, իրան տանք տանի Ալէքսանդրապօլ, հեռացնէ էտ շան տղին:

—Հա՛, էտ լաւ ասի՛ր, բաս որ էքուց մենք գնալ պտինք Խ......նի:

—Այ, էս շաշը ըստի չի:

—Հա լաւ: Տօ Սօսի որ Պէպօն գայ ասա տանի, համ էլ ասա Ստեփան աղէն էլ կըգայ շուտով տէնելու միամիտ կաց:

—Լաւ կլի հմա......

—Էլ ի՞նչ հմա, ինչ ասումեմ ասա:

—Լաւ կլի, լաւ, մի չարանալ:

—Հաց բէրէք ուտենք, էն ղանջղը էս ինչ եղացաւ չլի թէ էն շան տղէն տարաւ:

—Ի՞նչ ես ասում, աբա վունց կուտանի, նա Մէխշէնողանց տանն է. ասաց Սօփիօն:

—Հա դէ լաւ է հաց բէրէք:

Սուփրէն գծեցին, հացնատեցին: Մանիշակը այս բոլորը լսելուց յետոյ տուն մտաւ:

—Ախչի էս ղդամ վախտ որդի՞իր:

—Օչուր կար էի անում:

Բոլորն էլ հաց էին ուտում, բայց Մանիշակը դարդից մի թիքա չ'դրեց բերանը, խափելով թէ՝ այն տեղ հաց եմ կերել:



## ԺԲ.

Միւս օրը Մանիշակը գնաց Օսանի մօտ լաց լինելով, և սկսեց պատմել բոլորը:

—Օսան ջան մեռնումեմ մի ճար արա՛:

—Ի՞նչ խաբար ա:

—Էլ ինչ, ի՞նչ խաբար ա, ինձ ուզում են ղըզեն էքուց ըռաւօտ Ալէքսանդրապօլ:

—Բա վարդը իմացել չի՞:

—Ուրա թէ իմացել ա, ես էլ ընդուր համար եմ եկել, որ մի հնարքով իմացնենք:

—Բաս ըստը ճաշէն կ'գամ Սօփիօին կասեմ՝ որ թօղնու մթամ գնում ենք քօբերայ վանքերին մօմ անելու, հա ընդի վարդին կասենք:

—Ըղենց որ անենք, լաւ կ'լի:

—Դու ասա թօղնու:

—Կլի որ թօղնու, ըսօրի քանի ինձ հարցրին թէ վարդին ուզումես, ես ասի չէ՛, էլ չեմ ուզում, անպետքը տղայ է, ըսենցով արխէինացրի:

—Բաս լաւ, ես կ'գամ:

Կ'ս օրին հրաման առան և գնացին մանգալու:

Նրա բաղդից էլ Վարդը այնտեղ մօտիկ էր արածացնում իւր սուրուն, տեսնելուն պէս ճանաչեց, բայց որովհետեւ լոյս էր չ՚մօտեցաւ, այլ հեռուից իւր շհուով երգեց.

Ուխտս արել եմ դուզը,
Ջոկել եմ ղարագեօզը,
Աղլուխս ղըզի նշխեմ,
Թափ տուր քանքուլէս թոզը:

Մանիշակ.

Դու նստել ես քարին,
Ղօռու շհուն բերանիս.
Ոսկէ ղայթան կը գործեմ,
Կըդնեմ ջէբիդ բերանին:

Վարդ.

Դու կանգնել ես բարձր հովին,
Փռվում աղօշիս մովին,
Երանի քու ծոցիս քնողին,
Շամամ ծըծերս բռնողին:

Մանիշակ.

Կանգնել եմ բարձր հովին,
Չես հարցնում սրտիս դարդին,
Ինձ Ալէքսանդրապօլ պտի տանեն,
Քեզնից երկիր, երկիր հեռացնեն.



Խելք ունիս չարըտ տես,
Ինձ տանելու չըթողնես:

Վարդը երբ Մանիշակի Ալէքսանդրապօլ գնալը իմացաւ, այնպէս կատաղեց ինչպէս առիւծ, ուզանց որ գնա հէնց այն րոպէին փախցնէ, բայց վախեց՝ Օսանի պատժելու համար, որովհետեւ Օսանն էր երաշխաւոր, վանորդ ասաւ.

—Դու էս ըրկդուն դուս արի՛,
Ջէկ իմ դալը դուանը կանգնի.
Ես կըդամ կըփախցնեմ,
Ստեփան աղի ջիգրը կըհանեմ:

Վարդին յայտնելուց յետոյ, իւրեանց տները վերադարձան: Այս երեկոյ կապոյտ երկինքը ունքերը վրատուած, սեւ ամպերով ծածկուած էր, եւ միայն հարաւային կողմը՝ հորիզոնում փոքր ինչ տեղ, երեւում էր կապոյտ երկինքը: Այս երեկոյ խապախանանց տղերքը գնացել էին խ......ի, միայն տանը մնացել էր Սօսը՝ որը անհամբեր սպասում էր իւրեանց փեսայ Պէպօին: Բոլոր տանեցիք իբրեւ ճանապարհորդ Մանիշակի հետ քաղցր էին խօսում, եւ իբրեւ վերջին հրաժարական տալու եւ սիրտը ուրախացնելու համար, Նստոտեցան թուղթ խաղալու: Մանիշակը լսելով դրսից Վար-

դի շշվոցը, իսկոյն իմացաւ որ խուրեան է սպասում, և օգուտ քաղելով նորա զբաղուած լինելուց, դուս թռաւ և դրսից դուռը վրերներուն փակեց: Թեւաւոր դարձան, ծիտ դառան, թռան կորան:

Միւս առաւօտը գիւղի քէթխուդայ մարդիքը խորհուրդ արին և վճռեցին, որ այս օր հվէտ պսակվի: Այսպէս թէև մեր Ստեփան աղէն կամենում էր, որ Ալէքսանդրապօլ ուղարկէ, հեռացնէ Վարդից, բայց միւս առաւօտը դհոլի թխթխկոցը վեր էլաւ, զուռնի ձայնը բարձրացաւ և Վարդը ու Մանիշակն հարսանիք եղան: Հարսանիքի ընկգունը Վարդը այս երգը երգեց, և գիւղի երիխանց բերանը ձգեց, որոնք օր ու գիշեր սար ու ձորում էին երգում:

Գիշերը բոլորովին մթնագիշեր էր,
Լուսնիակը դեռ հլա դուս չէր էկել,
Իսպախանանց տղերքը տանը չէին,
Ջիմնել գնացել կորել էին:
Տանը հարսներն էլ, թուղթ էին խաղում,
Ցիրուր հետ ծիծաղում կրկչում,
Մէրն էլ օջաղի ղրաղին նստած,
Կրակից սիմինդ էր հանում փուչի էլած.



իսկ իմ Մանիշակը մոտիկ անելով ըստուր
ընդուր,
դուս թռաւ տանից, դուռը փակելով:
Տարա՛, տարա՛ փախցրի,
իմ խօսքը կատարեցի,
դէհ հմի գնայ Ստեփան աղայ.
Էլ խում կարալ չես խլել,
Հրամիք էլ էլայ:

Յ ա ւ ե լ ո ւ ա ծ.

Լսեցէ՛ք հայրեր,
Ականջ արէք մայրեր,
Մի քանի խօսք ասեմ,
Լինի ձեզ խորհուրդներ:

—

Այս ի՞նչ սովորութիւն է,
Որ մեր գիւղերում ընդունած է,
Աղջիկը ում ուզում է,
Ծնողը նորան տալիս չէ:

—

Մայրն է փեսայ ընտրում,
Աղջկանը խրատում,
«Որդի կա՛ց ի՞նչ պէս ոչխար,
«փեսիտ մօտ քու կեանքում մի խօսալ»:

—

Գիտէք ծնողներ այս օրէնքը,
Որ դրել են մեր նախնիքը,
Ինչքան վնասներ են տալիս,
Մեր խեղճ ժողովրդոցը:

—

Ապա պատմեմ ձեզ վնասները,
Որ յաճախ պատահում է մեր երկրումը,
Մխտներուտ ա խ......էցի աղջիկը,
Որ կորչում էր իւր փեսիցը:

—

Ո՛վ որ լսում էր այս համբաւը,
Մեծ անիծ էր Թափում,



Խեղճ աղջկայ գլխին,
Բերան բացում, նորան մեղադրում:

—

Ի՞նչու էք ՛իզուր զրպատում,
Խեղճ աղջկանը մեղադրում,
Դա խօսում չէ փեսայ ընտրում,
Որ դրան էք անիծում:

—

Մեղադրեցէ՛ք դորա ծնողներին,
Որ այդպէս վարվում են,
Այլ ևս իրանք չ՛ընտրեն,
Եւ այդպիսի մեղք չ՛գործեն:

—

Թողէ՛ք աղջկերքը ազատ լինին,
Բաղ ու բաղչում համարձակ շրջեն
Տղայ տեսնեն և քննեն,
Իրանք, իրանց փեսայ ընտրեն:

—

Այն ժամանակ միմեանց հետ սիրով,
Կեանք կանցուցանեն ուրախութիւնով,
Որ և գործը առաջ կ՛տանեն,
Միմեանց ուս ուսի տալով:

—

Նոցա որդիքը հայասէր,
Ամեն տեղ կլինին ազգասէր,
Բաց կանեն ուսումնարաններ
Կը պատրաստեն հայ սերունդներ:

—

Այլ ևս չեն ծածկել կողերը,

Սուտ հայասէր անուանվել,
Մեծ, մեծ բրթել,
Բայց ոչինչ չ՚գործել։

—

Այլ ևս չեն հաքնել,
Ձեռներուն լայկէ ձեռնոցներ,
Բռնել եղեգնէ փայտեր,
Եւ աչքերին դարսել ակնոցներ.

—

Այլ կ՚ծածկեն հաստրակ գլխարկ,
Որպէս Հայկաբնակ,
Եւ եղեգնու փոխանակ,
Կը վերցնեն.......

***

Լսեցէք օրիորդ-ք,
Ձեզ ևս ասեմ երկու խօսք՝
Սիրեցէք հայ տղայ,
Ընտրեցէք հայ փեսայ։

ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929

## ՎԵՐՋ.

Սխալ 2 դ երեսին բայաթի, պէտք է լինի բայաթի։
... 10-դ ... Օղուր ... ... ... ... Օչուր։
... 35-դ ... կրար ... ... ... ... կրակ։
... 42-դ ... Շամար... ... ... ... ղամար։
Շատ տեղ վարդ ... ... ... ... Վարդ։

# „ՑՈՒՑԱԿ“

Այս գրքին ստորագրվող մեծապատիւ Պարոնների անուանց։

| „Թփխիս“ | | օրինակ |
|---|---|---|
| Պ. Օրդար Յովհաննիսեանց ............... | | 17. |
| Պ. Զադար Գրիգորեանց..... ............... | | 2. |
| Պ. Միքայել Քոչարեանց........................ | | 7. |
| Պ. Վասիլ Տէր Յարութիւնեանց...... | | 1. |
| Պ. Միխայել Խիթարեանց.................. | | 17 |
| Պ. Գրիգորիս Երզնկեանց..................... | | 1. |
| Պ. Թադէոս Երուանդեանց.................. | | 1. |
| Պ. Աղէքսանդր Արարատեանց........... | | 1. |
| Արժ. Ս. ա. ք. Մովսէսեանց........... | | 1. |
| Արժ. Յովհ. ք. Քաջազնունի. / Արժ. Խորէն ք. Բարսեղեան. | Ախալքալաք | 34. |
| Արժ. Յովհ. ա. ք. Առիւծեանց | Սուրամ. | 34. |
| Պ. Յարութիւն Առաքելեանց............... | | 1. |
| Պ. Աւետիք Ենֆիաճեանց.................. | | 1. |
| Պ. Բ. Աբովեանց................................ | | 1. |
| Աշակերտք. Ն. Դ. | | |
| Պ. Գրիգոր Դեմիրճօղլեանց............... | | 1. |
| Պ. Մարտիրոս Դեմիրճօղլեանց........... | | 1. |
| Պ. Սմբատ Հովուեանց........................ | | 1. |
| Պ. Աղէքսանդր Եսայեանց................... | | 1. |
| Պ. Մովսէս Թումանեանց...................... | | 1. |
| Պ. Սարգիս Մէլքումեանց.................... | | 1. |
| Պ. Ստեփան Քուչարեանց..................... | | 1. |
| Պ. Յովհաննէս Կարախանեանց............ | | 1. |
| Պ. Միքայել Ղարախանեանց................ | | 1. |
| Պ. Գրիգոր Շաբուդաղեանց................ | | 1. |

| | | |
|---|---|---|
| Պ. Ստեփաննոս Տէր Սարգսեանց......... | 1. |
| Պ. Գրիգորիս Յակոբեանց..................... | 1. |
| Պ. Բաղդասար Ջարգեղեանց.............. | 1. |
| Պ. Յարութիւն Գէորգեան Ալբեգեանց. | 1. |
| Պ. Սարգիս Ղազարեանց..................... | 2. |
| Պ. Աւետիս Գուլակեանց..................... | 1. |
| Պ. Բագրատ Պիձիկեանց..................... | 1 |
| Պ. Մէլիքսէդեկ Շայնեանց.................. | 1. |
| Պ. Արշակ Մանուչարեանց.................. | 1. |
| Պ. Յովհաննէս Առիւծեանց ............. | 1. |
| Պ. Յարութիւն Տէր Նիկողոսեանց...... | 1. |
| Պ. Յարութիւն Ղեւոնդեանց.............. | 1. |
| Պ. Գրիգոր Մեհրաբեանց.... ...... ...... | 1. |
| Պ. Սամսոն Ֆրանգուլեանց.............. | 1. |
| Պ. Միհրան Բաղդասարեանց.............. | 1. |
| Պ. Աստուր Ղազումեանց.................. | 1. |
| Օր. Կատինկայ Շայինեանց.................. | 1. |
| Օր. Նատալեայ Աղամեանց.................. | 1. |
| Տ. Յովսաննայ Գէորգեան Արամեանց... | 1. |

Ծանօթ. Ներողութիւն ենք խնդրում յարգելի ընթերցողներից գրքիս թերութիւնների համար, մանաւանդ կէտադրութեան:

Հեղինակ.

## Գինն է 40 կոպէկ.

Գումարով առնողներին զեղչում կը լինի:

Ծախվում է Տփխիսի գրավաճառների մօտ:

2013
14925